

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/5

23 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Արթուր Հակոբյանի 18.01.2016 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 18.12.2015 թ-ի թիվ 309080/01 որոշման դեմ:

Ա/Ձ Արթուր Հակոբյանի գանգատում բերված փաստարկները.

14 հունվարի 2016թ.-ին ՀՀ ՖՆ իրավաբանական վարչությունից Ա/Ձ Արթուր Հակոբյանը ստացել է 18 դեկտեմբերի 2015թ-ին կազմած թիվ 309080/01 որոշումը, համաձայն որի տուգանք է նշանակվել 20.000 ՀՀ դրամի չափով 2015թ.-ի 2-րդ և 3-րդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկ չներկայացնելու համար:

Ա/Ձ Արթուր Հակոբյանը տեղեկացնում է, որ գրանցման ամսաթվից սկսած չի իրականացրել գործունեություն և չի հանդիսացել գործատու կամ հարկային գործակալ, իսկ համապատասխան գրոյական հաշվետվություններ չի ներկայացրել համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ 30 սեպտեմբերի 2008թ. թիվ 9 Հարկ վճարողների կողմից գործունեություն չիրականացնելու դեպքում հարկային մարմին հաշվարկների, հաշվետվությունների և հայտարարագրերի վերաբերյալ պաշտոնական պարզաբանման 4 կետի:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Արթուր Հակոբյանը խնդրում է վերանայել և չեղյալ համարել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 18 դեկտեմբերի 2015թ.-ի թիվ 309080/01 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 18.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2410 արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ Ա/Ձ Արթուր Հակոբյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի 2-րդ և 3-րդ եռամսյակների շրջանառության հարկի հաշվարկները:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 18.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 309080/01 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Արթուր Հակոբյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Ա/Ձ Արթուր Հակոբյանը հարկային մարմնում հաշվառման կարգնելուց հետո մինչ օրս որևէ գործունեություն չի իրականացրել:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Անի Հովհաննիսյանը 2015 թ-ի 2-րդ և 3-րդ եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել, հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկվող դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008 թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 9 պաշտոնական պարզաբանման դրույթներով, որի 4-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը (կազմակերպության, անհատ ձեռնարկատեր, նոտար) փաստացի չի իրականացնում գործունեություն (այդ թվում նաև՝ չի հանդիսանում գործատու կամ հարկային գործակալ), ապա՝ այդ ժամանակահատվածում ներառվող՝ հարկատեսակների համար օրենքով սահմանված լրիվ հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողն իր հաշվառման վայրի հարկային տեսչություն հաշվետվություններ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում:

Վերոգրյալից հետևում է, որ Ա/Ձ Արթուր Հակոբյանը փաստացի գործունեություն չիրականացնելու ժամանակահատվածի համար շրջանառության հարկի հաշվարկ ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 18.12.2015 թ-ի թիվ 309080/01 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

